ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԸ ԳԻՇԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մաս III

3. Ընդհանուր դրույթներ

Պաշտպանությունում լուսավորության ապահովման նպատակն է նվազեցնել գիշերային պայմանների բացասական ազդեցությունը պաշտպանական մարտի վարման ժամանակ և բարդացնել հարձակվող թշնամու գործողությունները։

Լուսավորման ապահովման խնդիրներն են՝

• տեղանքի և հակառակորդի լուսավորումը պաշտպանության մատույցներում կամ ելման դիրքում հետախուզություն վարելու և հակառակորդին կրակով խոցելու շահերից ելնելով՝ առաջնագծի, թևերի, հենակետերի միջև ընկած տարածություններում և հակառակորդի պաշտպանության մեջ մխրճվելիս;

• ստորաբաժանումների տարաշարժման ու հակագրոհների անցկացման ժամանակ լուսավորության ապահովումը;

• առաջխաղացող թշնամու ստորաբաժանումների, նրանց կրակային միջոցների, դիտակետերի և հրամանատարական կետերի լուսավորումը;

• հակառակորդի լուսավորության ապահովման միջոցներին հակազդելը;

• ստորաբաժանումների փոխգործողության ու ղեկավարման աջակցության ապահովումը;

• տարաշարժման երթուղիների և ուղիների, խոչընդոտների ու արգելապատնեշների միջով անցումների, առաջնագծի, ցանկապատված տարածքների, ինչպես նաև կեղծ դիրքերի, կրակային միջոցների ու զորքերի գործողությունների ուղենշումը;

• ինժեներական աշխատանքների ապահովումը։

Պաշտպանվող զորքերը սովորաբար լավ գիտեն այն տարածքը, որտեղ նրանք գործում են, ինչը նրանց համար հեշտացնում է կենդանի ուժով և տեխնիկայով մանևրելն ու կողմնորոշման իրականացումը, ուստի կարող են պատրաստվել լուսավոր ժամանակ: Գիշերը ավելի հեշտ է թաքցնել և քողարկել մարտակարգերն ու կրակի համակարգը, ինչպես նաև մեծացնել հակագրոհների արդյունավետությունը նույնիսկ փոքր ուժերով:

Միաժամանակ, սահմանափակ տեսանելիությունը հակառակորդին թույլ է տալիս գաղտնի վերախմբավորել իր ուժերը և անսպասելիորեն սկսել հարձակումը: Մարտադաշտի դիտարկման վատ պայմանները բարդացնում և երբեմն անհնար են դարձնում զորքերի կենտրոնացված կառավարումը: Հետևաբար, գիշերային պաշտպանական մարտում ենթակա հրամանատարներին պետք է տրվի գործելու ավելի լայն ինքնուրույնություն: Սահմանափակ տեսանելիությունը բարդացնում է նաև նշանառու կրակի վարումը, ինչպես առջևագծում, այնպես էլ պաշտպանության խորքում:

Թվարկված պայմանները որոշակի ազդեցություն են ունենում գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում պաշտպանական մարտ վարելու վրա: Այս պայմանների մանրակրկիտ դիտարկումը թույլ կտա պաշտպանվող ստորաբաժանմանը օգտվել գիշերային գործողություններից և նվազեցնել բացասական ազդեցությունը կայուն պաշտպանության ստեղծման պարագայում: Գիշերը պաշտպանությանը նախապատրաստված ստորաբաժանումների անսպասելի և համառ հակազդեցությունը թույլ կտա հարձակումը սկսած հակառակորդին զգալի կորուստներ պատճառել և ստիպել նրան հետագայում հրաժարվել հարձակումից:

• Հակառակորդի հարձակման նախապատրաստությունները ժամանակին հայտնաբերելու և հանկարծակի հարձակումը կանխելու համար ուժեղացվում են պաշտպանության թևերի և կցատեղերի (միջանկյալ տարածքների) հետախուզումը, մարտական պահպանությունն ու պաշտպանությունը, կազմակերպվում է լուսավորության ապահովում արգելապատնեշային համակարգում, առաջնագծում և կցատեղերում տեղադրվում են ձայնային ու լուսային ազդանշանային սարքեր, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ պաշտպանությունում անձնակազմի զգոնությունը բարձրացնելու ուղղությամբ:

Գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում պաշտպանության հետախուզման հիմնական խնդիրներն են՝

• գիշերային հարձակման համար հակառակորդի նախապատրաստությունների ժամանակին հայտնաբերումը,

• հակառակորդի մարտակարգերում գիշերային տեսողության և տեղանքի լուսավորության սարքավորումների առկայության հայտնաբերումը,

• արգելափակողների միջով անցումներ կատարող հակառակորդի սակրավորների ժամանակին հայտնաբերումը,

• հակառակորդի հարձակման անցման բացահայտումը:

Գիշերը հակառակորդի հանկարծակի հարձակման մասին պաշտպանվող ստորաբաժանմանը զգուշացնելու համար մեծ նշանակություն ունի մարտական պահպանության կազմակերպումը: Այդ նպատակով ապահովման գոտում ուժեղացվում է գործող մարտական պահպանությունը, և, բացի այդ, տեղակայվում է անմիջական պահպանություն: Մարտական պահպանությունում ծառայություն իրականացնող ստորաբաժանումները լրացուցիչ ուժեղացվում են ականանետերով և հակատանկային միջոցներով, իսկ երբեմն էլ տանկերով, եթե հնարավոր է դրանք քողարկել: Հակառակորդի ցանկացած տեղաշարժը դիտարկելու և ժամանակին հայտնաբերելու համար պարտադիր կարգով պահպանության ստորաբաժանումները համալրվում են գիշերային տեսողության (ջերմատեսիլներ) և այլ անհրաժեշտ սարքավորումներով:

Անկախ մարտական պահպանության և հետախուզության առկայությունից ու կազմից, առաջնագծում և պաշտպանության խորքում գտնվող ստորաբաժանումներում գիշերային ժամերին տեղադրվում են լրացուցիչ դիտակետեր: Բլինդաժների, հսկիչ կետերի և թաքստոցների մոտ կարգվում են ժամապահներ: Խրամուղիներում, հաղորդակցության ուղիներում և հենակետերի միջև ընկած հատվածներում, անհրաժեշտության դեպքում, կազմակերպվում է պարեկություն:

Պաշտպանության շրջանների և հենակետերի միջև ընկած տարածություններում, ինչպես նաև գիշերը հետախուզության համար բաց թևերում կարող են տեղակայվել դետքեր: Հատուկ ուշադրության են արժանի այն ուղղությունները, որտեղ հակառակորդը կարող է գաղտագողի մոտենալ պաշտպանության առաջնագծին կամ ներթափանցել պաշտպանվող ստորաբաժանումների տեղակայման խորությունը:

Վաշտի (դասակի) հենակետերի միջնագոտիներումում, մարտական պահպանության, առաջնագծի և պաշտպանվող օբյեկտների առջևի արգելապատնեշներին մոտենալու վայրերում խորհուրդ է տրվում օգտագործել ձայնային և լուսային ազդանշանային սարքեր: Այդ նպատակների համար կարող են օգտագործվել ստանդարտ ազդանշանային ականներ, ինչպես նաև իմպրովիզացված նյութերից պատրաստված ազդանշանային առարկաներ, ազդանշանային զանգեր, լուսարձակող առարկաներ և այլն:

Գիշերը պաշտպանությունն ամրապնդելու և առաջնագծի առջևում, հատկապես ստորաբաժանումների կողմից չզբաղեցված միջակայքերում և տարածքներում, կրակի խտությունը մեծացնելու համար անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել ուժերի և միջոցների մասնակի վերախմբավորում: Կարելի է առաջ մղել կրակային միջոցների մի մասը, այդ թվում՝ հակատանկային հրետանին, որը կզբաղեցնի ժամանակավոր կրակային դիրքեր: Երբեմն, կարևորագույն սպառնացող ուղղություններում, ռեզերվի կազմից կրակային միջոցները կարելի է մոտեցնել առաջնագիծն: Բացի այդ, հակատանկային պաշտպանությունն ուժեղացնելու և դարանակալելու համար հնարավոր է օգտագործել տանկեր :

Գիշերը պաշտպանությունում ստորաբաժանումների կրակային համակարգի հիմքը հանդիսանում է ուղիղ նշանառությամբ կրակելու համար նախատեսված միջոցների, տանկերի և գիշերային տեսողության սարքեր ունեցող մարտական մեքենաների կրակը: Դա պայմանավորված է նրանով, որ սահմանափակ տեսանելիության պայմաններում հակառակորդին խոցելու ավելի մեծ արդյունավետություն է ձեռք բերվում միայն այն դեպքում, երբ կրակն իրականացվում ուղիղ նշանառությաբ՝ հեռավորության վրա: Մթության մեջ թիրախը դիտարկելու շարունակականությունը հնարավոր է միայն գիշերային տեսողության սարքերի (ջերմատեսիլների) կիրառման դեպքում:

Գիշերը առաջնագծին կրակային միջոցների (ռեզերվների) մոտեցումը ոչ միայն նպաստում է հակառակորդի հարձակումը հետ մղելու պաշտպանության կարողությունների խտացմանը և բարձրացմանը, այլև որոշակի պայմաններում նպաստում է կենդանի ուժի և հակառակորդի հարվածներից միջոցների պահպանմանը, որոնք կարող են հասցվել պաշտպանության խորքում բարձր ճշգրտության զինամթերքով: Ռեզերվները ամբողջ կազմով պաշտպանության առաջնագծին մոտեցնելու հարցը պետք է լուծվի հաշվի առնելով կոնկրետ պայմանները: Հարկ է հաշվի առնել, որ որոշակի պայմաններում առաջնագծում պաշտպանության չափազանց մեծ խտացումը կարող է ձեռնտու լինել հակառակորդին և հանգեցնել նրա հարվածներից չարդարացված կորուստների: Այս հարցը լուծելիս ստորաբաժանման հրամանատարը, բացի այդ, պետք է հաշվի առնի նաև այն փաստը, որ ավագ պետի կրակային միջոցների (հրետանի, ականանետեր, տանկեր և հակատանկային ռեզերվ) մի մասը կարող է առաջ քաշվել իր պաշտպանական

տարածքում գիշերը: Հետևաբար, նա պետք է իր ռեզերվը և կրակային միջոցները տեղակայի առաջնագծում՝ հաշվի առնելով ավագ հրամանատարի ուժերի և կրակային միջոցների տեղակայումը, կրակային համակարգի կառուցումը և կազմակերպի նրանց հետ սերտ փոխգործակցություն:

Գիշերային պայմաններում հակագրոհների իրականացումը կապված է մեծ աշխատանքի հետ, բայց դրանից պետք չէ հրաժարվել: Պետք է հիշել, որ բարենպաստ պայմաններում նույնիսկ աննշան ուժերի կողմից հանկարծակի և վճռական հակագրոհը կարող է լուրջ ազդեցություն ունենալ գիշերային մարտում: Գիշերային հակագրոհը հոգեբանական ուժեղ ազդեցություն է թողնում հակառակորդի վրա : Վատ տեսանելիության պայմաններում հարձակվողի համար դժվար է հաստատել հակագրոհային ուժերի կազմը և, հետևաբար, որոշել ստեղծված վտանգի բնույթը և արագորեն տեղափոխել յուրային զորքերի ջանքերը նոր ուղղությամբ: Չպետք է մոռանալ, որ հակառակորդը գործելու է անծանոթ տեղանքում, իսկ հակահարձակվող ստորաբաժանումները նախապես կարող են ուսումնասիրել այն:

Լուսավորությունը կենսական նշանակություն ունի գիշերային մարտական գործողությունների ժամանակ պաշտպանվող ստորաբաժանումներին աջակցելու համար: Սա ներառում է հետևյալը՝

• տեղանքի լուսավորություն,

• հարձակվող հակառակորդի կուրացում,

• լուսավորվող կողմնորոշիչների տեղադրում,

• փոխադարձ ճանաչման ազդանշանների հաստատում, յուրային ուժերի նշանակում, նշանացուցում և ղեկավարում:

Հաշվի առնելով մարտական իրավիճակը լուսավորության ապահովումը կազմակերպվում է ստորաբաժանման հրամանատարի կողմից՝ ավագ հրամանատարի հրահանգներին համապատասխան : Լուսավորության պոստերի լուսավորության հաճախականությունը որոշվում է հիմք ընդունելով հակառակորդի սպասվող գործողությունները և տեղանքի բնույթը: Եթե հակառակորդի հարձակումը քիչ հավանական է, լուսավորությունը կարող է լինել ավելի քիչ ինտենսիվ:

Փորձը ցուց է տվել, որ պաշտպանության մեջ մխրճված հակառակորդին ոչնչացնելիս, հատկապես հակագրոհի ժամանակ, լուսային արկերն ու ականները կիրառվել են հակագրոհ իրականացնող հրամանատարի որոշմամբ: Այս դեպքում հրամանատարը լուսավորող ականներով կրակելու համար սահմանել է ականանետների ժամանակավոր կրակային դիրքեր, ինչպես նաև սահմանել է լուսավորող ականներով կրակելու և շարժման կարգը և դրանց կրակոցներ համաձայնեցրել է լուսավորող փամփուշտներով տեղանքը լուսավորելու հետ:

Տեղանքը լուսավորելու համար պաշտպանության առաջնագծում և հակառակորդի գտնվելու վայրում կարող են ստեղծվել հրդեհներ: Այդ նպատակով կիրառվում են հրկիզող արկեր և ականներ: Հրդեհների ստեղծումը, որպես տեղանքը լուսավորելու միջոց, ձեռնտու է նրանով, որ դրանք բարենպաստ պայմաններ են ստեղծում դիտարկման և նշանառու կրակ վարելու համար, և, միևնույն ժամանակ, չեն ապաքողարկում յուրային զորքերի գտնվելու վայրը: Հրդեհների ֆոնին գիշերային ժամերին հստակ նախագծվում է հակառակորդի ուժերի և միջոցների շարժը, նրա մարտական տեխնիկան և սպառազինությունը:

Գիշերը պաշտպանությունում տարածքը լուսավորելու հետ մեկտեղ մարտական խնդիրների կատարումը մեծապես պայմանավորված է գիշերային տեսողության սարքերի (ջերմատեսիլների) հմուտ կիրառման հետ: Գիշերային տեսողության սարքերը (ջերմատեսիլները), ինչպես նաև լուսավորող սարքերը, օգտագործվում են ստորաբաժանման

հրամանատարի կամ ստեղծված մարտական իրավիճակի ցուցումներին համապատասխան:

Գիշերային տեսողության սարքերով հագեցած զենքի յուրաքանչյուր տեսակի համար սահմանվում է (նշվում է) հետևյալը.

• կրակային դիրքեր (հիմնական և երկրորդական) և կրակի վարման (դիտարկման) հատվածներ;

• եզակի և խմբային թիրախները նույնականացնելու համար նշանացուցման ընթացակարգը և մեթոդները;

• ինֆրակարմիր լուսարձակների (ջերմատեսիլների) աշխատանքային ռեժիմը և դրանց փոխգործողությունը լուսավորության պոստերի հետ:

Գիշերային նշանառությամբ բոլոր զենքերի կրակային դիրքերը պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով գիշերային տեսողության սարքերով հագեցած ՀՄՄ-ների (ԶՓՄ-ների) տեղակայումը: Յուրաքանչյուր տեսակի հրաձգային զենքի համար խորհուրդ է տրվում նշանակել երկու կամ երեք կրակային դիրք՝ միմյանցից 20-40 մետր հեռավորության վրա:

Գիշերային տեսողության սարքերի արդյունավետությունը պաշտպանությունում մեծապես կախված է դրանց հմուտ օգտագործումից՝ լուսավորության սարքավորումների հետ սերտ համակարգված աշխատանքով: Ինտենսիվ լուսավորության ժամանակահատվածներում գիշերային տեսողության սարքերը, մասնավորապես՝ ինֆրակարմիր լուսարձակները, պետք է անջատվեն: Պաշտպանությունում գիշերային տեսողության սարքեր օգտագործելիս կարևոր է դրանք զգուշորեն քողարկել, քանի որ անարդյունավետ օգտագործումը կարող է հեշտությամբ բացահայտել ոչ միայն դրանց գտնվելու վայրը, այլև ամբողջ կրակային համակարգը:

Հակառակորդին մոլորեցնելու և գիշերային տեսողության սարքերի ու տարածքի լուսավորության տեղակայումը թաքցնելու համար պաշտպանությունում տեղադրվում են կեղծ կրակային դիրքեր, որոնք նմանակում են ինֆրակարմիր որոնողական լույսերը, և ստեղծվում են շարժական լուսավորության կետեր:

Պաշտպանության ժամանակ հակառակորդի կողմից հրդեհներ կազմակերպելու հնարավորությունը բացառելու համար պետք է, հնարավորության դեպքում, նախապես հեռացնել բոլոր այրվող նյութերը: Բացի այդ, հրդեհի օջախները վերացնելու համար նշանակվում են հատուկ թիմեր (ստորաբաժանումներ):

3.1. Գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում պաշտպանական մարտերում ստորաբաժանումների կառավարման առանձնահատկությունները

Գիշերը պաշտպանական մարտում զորքերի կառավարման դժվարությունները պայմանավորված են սահմանափակ տեսանելիությամբ: Մարտը ղեկավարելու համար պետք է ունենալ տվյալներ յուրային և հակառակորդի զորքերի մասին, իսկ այդ տվյալները ստանալու գլխավոր միջոցը մարտադաշտի դիտարկումն է, որը գիշերը զգալիորեն բարդանում է: Տարբեր գիշերային տեսանելիության սարքերը, որոնք պետք է բացառեն այս անբարենպաստ պայմանները, չեն կարող ապահովել այն դիտարկումը, որը օրվա լուսավոր ժամերին ապահովում են սովորական օպտիկական սարքերը: Գիշերային տեսանելիության սարքերի անբավարար տիրույթը հատկապես սուր է զգացվում պաշտպանությունում, երբ հսկողության տիրույթը պետք է զգալիորեն ավելի մեծ լինի, քան հարձակողական մարտում: Չնայած դրան, գիշերային պաշտպանական մարտում զորքերի կառավարման պայմանները մի փոքր ավելի բարենպաստ են, քան հարձակողական մարտում: Դրա հիմնական գործոնը պաշտպանվող տարածքի ավելի լավ իմացությունն է :

Բացի այդ, պաշտպանական մարտում նախապես նշվում և լուսաբանվում են կողմնորոշիչները: Կրակի կառավարումը հեշտացվում է նրանով, որ գիշերը կրակելու համար տվյալները նախապես պատրաստված են, իսկ կրակի համակարգի ստեղծումը և դրա համադրությունը տարբեր արգելապատնեշների հետ տեղի է ունենում լուսավոր ժամերին: Խրամատներում գտնվող ստորաբաժանումներն ավելի հեշտ են լուսավորում հարձակվող հակառակորդին՝ առանց իրենց պաշտպանությունը ապաքողարկելու, ինչը լրացուցիչ հարմարավետություն է ստեղծում գիշերային տեսանելիության սարքերի կիրառման համար: Գիշերը պաշտպանական մարտում հատուկ ուշադրություն պետք է դարձնել հակագրոհների համար նշանակված ստորաբաժանումների կառավարման կազմակերպմանը: Ըստ էության, սահմանվում են նույն պահանջները, ինչ օրլուսավոր ժամանակ հարձակողական մարտում: Բայց այս դեպքում կառավարումը հեշտացվում է նրանով, որ բոլոր միջոցները կարող են նախապես պլանավորվել ենթադրյալ հակագրոհի ամբողջ խորությամբ:

Գիշերը պաշտպանական մարտում սուրհանդակները և կապի սպաները ավելի քիչ դժվարությունների են հանդիպում, քան ցերեկը: Դա պայմանավորված է նրանով, որ նրանք լավ գիտեն ղեկավարման կետերի (այսուհետ՝ ՂԿ) գտնվելու վայրերը, որոնց հետ նրանք կապ են պահպանում, և ամենակարճ ուղիները, որոնք օրվա ընթացքում չեն կարող օգտագործվել:

Գիշերը պաշտպանությունում զորքերի ղեկավարումը կապված չէ մեծ դժվարությունների հետ, քանի որ շատ դեպքերում այն պատրաստելու համար բավական ժամանակ կա նույնիսկ մինչև մութն ընկնելը: Այնուամենայնիվ, գիշերը պաշտպանական մարտում զորքերի ղեկավարումը բարդանում է որոշ հատուկ հանգամանքներում : Օրինակ, այն պատճառով, որ ՂԿ-ն, և, հետևաբար, կապի միջոցները, երկար ժամանակ մնում են մեկ տեղում, ինչը հակառակորդին հնարավորություն է տալիս հեշտությամբ հայտնաբերել, ոչնչացնել կամ խաթարել կապի տեխնիկական միջոցների աշխատանքը՝ դրանով իսկ բարդացնելով կառավարումը: Անձնական հաղորդակցությունը, որը հրամանատարության և զորքերի միջև ամենահուսալի մեթոդն է, պաշտպանությունում բարդանում է ՂԿ-ների միջև համեմատաբար մեծ հեռավորությունների և մթության մեջ տեղաշարժի դժվարությունների պատճառով, հետևաբար, հրամանատարներից պահանջվում է նախաձեռնություն և ինքնուրույնություն, այսինքն՝ ավագ պետի հետ կապի բացակայության պայմաններում առաջադրանքը կատարելու ունակություն:

3.2. Պաշտպանական մարտերի վարումը գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում

Հարձակման համար հակառակորդի պատրաստության նշանների հայտնաբերմամբ կամ հարձակման անցնելու ժամանակի վերաբերյալ տվյալների ստացմամբ, ստորաբաժանման հրամանատարը միջոցներ է ձեռնարկում պաշտպանությունն ուժեղացնելու համար: Հարձակումն սկսելուց առաջ հակառակորդը փորձելու է հետախուզության բոլոր միջոցներով բացահայտել ձեր պաշտպանության կառուցումը, կրակի և տեղանքի լուսավորության համակարգերը: Այս խնդիրը լուծելու համար հակառակորդը իրականացնելու է հետախուզական դետքերի և մարտով հետախուզման միջոցով, որի ընթացքում լայնորեն օգտագործելու է գիշերային տեսողության սարքեր և լուսավորության սարքավորումներ:

Հակառակորդի հետախուզության գործողություններին խոչընդոտելը կազմակերպվում է այնպես, որ միևնույն ժամանակ չբացահայտվի ձեր պաշտպանության բնույթը:

Հետախուզական խմբերի, հետախուզական դետքերի խոցման, ինչպես նաև հակառակորդի մարտով հետախուզությունը հետ մղելու համար նշանակվում են հերթապահ կրակային միջոցներ: Դրանցից կրակը վարվում է ժամանակավոր կրակային դիրքերից, միայն պաշտպանության այն հատվածներում, որտեղ գործում է հակառակորդի հետախուզությունը:

Չեզոք գոտին պետք է զբաղեցվի մարտական պահպանությամբ և հետախուզական դետքերով (հնարավորության դեպքում՝ ընդհուպ մինչև հակառակորդի արգելափակոցները): Բացի այդ, այն պետք է գտնվի յուրայինների կրակի ծածկույթի տակ: Սա կօգնի պահպանել մարտական ոգին և զորքերի պատրաստվածությունը թշնամու հարձակումները հետ մղելու համար, նույնիսկ երկարատև դիրքայնության պայմաններում:

Հակառակորդի գործողությունները դիտարկելու համար լուսավորման կետերը (պոստերը) սահմանված պարբերականությամբ լուսավորում են տեղանքը: Այդ նպատակով հրամանատարի կողմից սահմանված կարգով պարբերաբար օգտագործվում է գիշերային տեսանելիության սարքերը (ջերմատեսիլները): Կրակային միջոցները գնդակոծում են պաշտպանության դժվար դիտարկվող մատույցները, իսկ հրետանին և ականանետերը, տարածքը լուսավորելու համար, հրամանատարի հրամանով, կարող են կրակ բացել լուսավորող արկերով (ականներով):

Հաջող գիշերային մարտերի վարումը պահանջում է լայնածավալ նախաձեռնողականություն ոչ միայն բոլոր մակարդակի հրամանատարներից, այլև յուրաքանչյուր զինվորից: Այն սկզբունքը, որ յուրաքանչյուր զինվոր պետք է հստակ հասկանա իր առաքելությունը և թե ինչպես այն կատարել մյուս զինվորների հետ համագործակցությամբ, լիովին վերաբերում է գիշերային մարտերին: Սա պայմանավորված է գիշերային պաշտպանական մարտերի յուրահատուկ բնույթով: Նույնիսկ մարակրկիտ նախապատրաստության դեպքում անհնար է կանխատեսել մարտական իրավիճակի յուրաքանչյուր հնարավոր փոփոխություն, ինչպես նաև անհնար է ճշգրիտ կանխատեսել առաջխաղացող թշնամու գործողությունները յուրաքանչյուր մանրամասնությամբ: Հետևաբար, մարտական գործողությունների ժամանակ յուրաքանչյուր հրամանատար պետք է կարողանա ինքնուրույն որոշումներ կայացնել և գործել նախաձեռնողաբար:

Գիշերային պաշտպանական մարտում անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

- լավ կազմակերպված փոխգործողություն,
- հանգամանորեն պատրաստված կրակային համակարգ՝ զուգորդված արգելապատնեշների և տեղանքի լուսավորության համակարգի հետ,
- զորքերի անընդհատ ղեկավարում:

Այս պայմաններից նույնիսկ մեկի բացակայությունը կարող է զգալիորեն բարդացնել պաշտպանական մարտի հաջող անցկացումը:

Հաջող մաններներ ապահովելու համար պաշտպանության առաջնագծում գտնվող ստորաբաժանումները պետք է հանգամանորեն նշեն իրենց նահանջի ուղիները կամ նշանակեն ուղեցույցներ: Նահանջի ուղիները պետք է ընտրվեն փակ տեղանքում: Մարտական գործողությունների ժամանակ շատ դժվար է տարբերակել առաջնային դիրքից նահանջող յուրային ստորաբաժանումները հակառակորդից: Հետևաբար, մարտակարգերի միջով առաջնային դիրքից այլ դիրքեր դուրս գալու դեպքում սահմանվում են նախապես պայմանավորված ազդանշաններ, գաղտնաբառեր և նույնականացման նշաններ:

Հակառակորդի հրետանու և օդուժի հարձակման նախապատրաստման ընթացքում պաշտպանվող ստորաբաժանումները զբաղեցնում են թաքստոցները: Զույգ դիտորդներն անընդհատ հսկողություն են իրականացնում պաշտպանության առաջնագծի մուտքերի

մուտքերի ուղղությամբ: Միաժամանակ, նշանակված լուսային կետերը լուսավորում են պաշտպանության առաջնագծի տարածքը՝ հակառակորդի հարձակումը արագորեն հայտնաբերելու համար: Երբ հակառակորդի տանկերն ու հետևակը մոտենում են կրակի բացման բնագծերին, գործի են դրվում բավարար հեռահարության զենքեր: Նախապես կազմակերպված կրակը, մասնավորապես՝ խաչաձև կրակը և թևային կրակը, արդյունավետ է:

Դարանակալումները, մասնավորապես տանկային դարանակալումները, կարևոր դեր են խաղում պաշտպանական մարտերում՝ սովորաբար թույլ տալով հարձակվող թշնամու տանկերին անցնել, ապա անսպասելիորեն կրակ բացել դրանց ուղղությամբ թիկունքից և թևերից:

Երբ հակառակորդը թափանցում է առաջին շարակարգի ստորաբաժանումների պաշտպանություն, բոլոր հրամանատարները պետք է հմտորեն կազմակերպեն հակագրոհներ: Առաջնագծի նկատմամբ հակառակորդի մոտեցմամբ պաշտպանվող ստորաբաժանումներն առանց սահմանափակման օգտագործում են գիշերային տեսանելիության սարքերը, իսկ հակառակորդի հարձակվող տանկերի, ՀՄՄ-ների (ԶՓՄ-ների) և հետևակի լուսավորումն անհրաժեշտության դեպքում իրականացնում են առաջին շարակարգի վաշտերը:

Հակառակորդի հարձակումը հետ է մղվում այնպիսի հեռավորություններից, որոնք թույլ են տալիս արդյունավետ կրակ բացել գիշերային տեսողության սարքերի միջոցով կամ հակառակորդի մարտակարգերը լուսավորելով: Հրամանատարի ցուցումով հակառակորդի անմիջական պաշտպանության առաջնագծի տեղանքն ու օբյեկտների լուսավորությունն իրականացնում են հրետանային և ականանետային միջոցներով՝ հատուկ ուշադրություն դարձնելով հարձակվող հակառակորդի մարտակարգերի լուսավորմանը: Երբ հակառակորդը մոտ է պաշտպանության առաջնագծից 300-400 մետր հեռավորության վրա, լուսավորություն ապահովելու համար միացվում են առաջին շարակարգի վաշտերի լուսավորությունն ապահովող կետերը: Միաժամանակ, հարձակվող հակառակորդի, նրա հետախուզական, դիտարկման և նշանառման սարքավորումները կուրացվում են լուսավորող և ծխային արկերի (ականների) և հրթիռների միջոցով:

Հաջող հակագրոհը կախված է հակագրոհող ստորաբաժանումների ժամանակին առաջխաղացումից դեպի հակառակորդի ներթափանցման գոտի: Սա առավել արդյունավետ է իրականացվում այն ժամանակ, երբ հակառակորդը, սեպվելով պաշտպանությունում, դեռ չի հասցրել կազմակերպել իր մարտակարգի տարրերի միջև փոխգործողությունը և ամրապնդել իր դիրքերը գրավված տարածքում: Հակագրոհի սկզբում խորհուրդ է տրվում հանկարծակի միացնել լուսարձակները՝ թշնամուն անակնկալի բերելու և նրա դիտակետերը կուրացնելու համար: Ամբողջ կրակային ուժը, այդ թվում՝ խորքում գտնվողները, օգտագործվում է ի աջակցություն հակագրոհի:

Հակագրոհ անցկացնելուց հետո ստորաբաժանումները ամրապնդում են իրենց դիրքերը և պատրաստվում են հետ մղել հակառակորդի հերթական հարձակումը:

Նկարագրված սկզբունքները ցույց են տալիս, որ ստորաբաժանումները կարող են գիշերը կատարել ցանկացած մարտական խնդիր: Գիշերը հաջող պաշտպանական մարտ վարելը հնարավոր է պաշտպանվող ստորաբաժանումների հանգամանալից պատրաստման դեպքում: Գիշերային պաշտպանության մեջ կարևոր դեր են խաղում լավ համակարգված փոխգործողությունը և մանևրը, հանգամանորեն պատրաստված կրակային և մարտադաշտի լուսավորության համակարգը՝ զուգորդված արգելափակոցների հետ, ինչպես նաև չնդհատվող ղեկավարումն ու կառավարումը:

3.3. Պաշտպանական մարտերի վարման առանձնահատկությունները հատուկ պայմաններում գիշերը

Լեռներում

Լեռնային պայմաններում պաշտպանության վարումը գիշերը մի փոքր այլ է, քան ցերեկը: Օրինակ՝ խորհուրդ է տրվում գիշերը պաշտպանվող զորքերի մարտական պաշտպանությունը հանձնարարել պաշտպանության առաջնագծում տեղակայված ստորաբաժանումներին և գիշերային պարեկներ ուղարկել այն վայրեր, որտեղից հորիզոնի ֆոնին կարող եք դիտարկել հակառակորդի մոտեցման ուղիները և գտնվելու վայրերը: Այս հանգամանքը երբեմն պահանջում է խրամուղիներս սարքավորել լեռնաշղթաների հակառակ լանջերին:

Լուսավորության համար անհրաժեշտ միջոցներով պետք է առանձնացվեն անձնակազմեր: Անհրաժեշտ է լուսավորել լեռնային գոհավորվածությունները, թամբանման հատվածները, լեռնանցքները, անտառապատ ճանապարհները, լեռնային արահետները և այլն:

Պաշտպանության ժամանակ մարտական ապահովումը կազմակերպելիս սահմանափակ տեսանելիությունը պահանջում է լրացուցիչ ուժերի և միջոցների հատկացում: Եթե պաշտպանության սովորական պայմաններում անձնակազմի մեծ մասը գիշերը հանգստանում է, և միայն մեկ երրորդն է արթուն, ապա լեռնային տարածքում ուժերի հիմնական մասը պետք է լինի մշտական պատրաստականության մեջ, և միայն փոքր մասը կարող է հանգստանալ կամ զբաղվել ինժեներական աշխատանքներով:

Երբեմն, մութն ընկնելուն պես, խորհուրդ է տրվում երկրորդ շարակարգի ստորաբաժանումները առաջ քաշել պաշտպանության առջնագիծ և տեղավորել հենակետերի միջև ընկած տարածություններում:

Գիշերը լեռներում պաշտպանվելիս մեծ նշանակություն է տրվում քողարկմանը: Հիմնականում անհրաժեշտ է հակառակորդից քողարկել պաշտպանության բնույթը, ստորաբաժանումների գտնվելու վայրը և կրակային համակարգը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծանր զինատեսակների քողարկմանը, որոնք հակառակորդի կողմից կարող են հայտնաբերվել գիշերային տեսանելիության սարքերով:

Լեռնային տեղանքում գիշերային պաշտպանական մարտում հատուկ նշանակություն են ստանում հակագրոհները: Հակառակորդի առաջխաղացման հնարավորությունը միայն որոշակի ուղղություններով պայմաններ է ստեղծում դրանց հաջող իրականացման համար: Ճանապարհների շարասյունների, անցուղիների անբավարար քանակը բարդացնում է հատկապես մեծ ուժերով և ծանր սպառազինությամբ մանները: Հետևաբար, հակագրոհները պատրաստվում են վաշտից բարձր բոլոր ստորաբաժանումների և զորամասերի կողմից: Դրանց իրականացման համար նախապես պատրաստվում են ծավալման բնագծեր ու ելման ուղիները, հատկացվում են կրակային աջակցության միջոցներ, կազմակերպվում է սերտ փոխգործողություն առաջին շարակարգի ստորաբաժանումների հետ:

Լեռնային տեղանքում գիշերային պաշտպանական գործողությունները հիմնվում են կարևոր ուղղություններով առանձին հենակետերի և պաշտպանության շրջանների պահպանման վրա: Գիշերը պաշտպանվող զորքերի ակտիվությունը դրսևորվում է պաշտպանության մեջ սեպված հակառակորդի դեմ կարճ, վճռական հակագրոհներով:

Պաշտպանական մարտը կարող է ստանալ շրջապատման մեջ մարտի բնույթ, որը կարող է տևել ամբողջ գիշեր և նույնիսկ մի քանի օր: Հակառակորդը միշտ ձգտելու է գրավել անցուղիները, ճանապարհներն ու լեռնանցքները, որպեսզի ապահովի իր

հիմնական ուժերի առաջխաղացումը: Ուստի յուրաքանչյուր ստորաբաժանում, որը զբաղեցնում է հենակետը կամ պաշտպանության շրջանը, և շրջապատման մեջ է, պետք է կատարի իր խնդիրը: Իհարկե, այս պայմաններում անձնակազմից պահանջվում է հատկապես բարձր բարոյական և մարտական հատկանիշներ:

Լեռնային տեղանքում պաշտպանվող զորքերի ղեկավարումը գիշերը բարդանում է դիտարկման սահմանափակ հնարավորություններով, ստորաբաժանումների տարանջատվածությամբ, ռադիոկայանների գործողության շառավղի կրճատմամբ, լարային կապի գծերի տեղադրման բարդացմամբ: Ստորաբաժանումների տարանջատվածության պատճառով լեռնային տեղանքում մարտը սովորաբար վերածվում է պայքարի առանձին օջախների, ուստի մեծանում է ստորաբաժանումների հրամանատարների ինքնուրույնությունը: Հետևաբար, իր հայեցողությամբ լուծելով խնդիրները, յուրաքանչյուր հրամանատար պետք է հստակ պատկերացնի մարտի ընդհանուր մտահղացումը:

Լեռնային տեղանքում գործելիս ստորաբաժանումների կողմից իրենց դիրքը նշելու համար տրվող լուսային ազդանշանները անփոխարինելի են: Դրանք պետք է լավ դիտարկվեն, քանի որ լեռնային տեղանքում դրանց տեսանելիությունը բավականին սահմանափակ է:

Քաղաքում (բնակավայրում)

Գիշերը բնակավայրի պաշտպանության առանձնահատկությունները կախված են կառուցապատման բնույթից և համակարգից, դրանում գտնվող շենքերի և շինությունների տեղակայությունից և ամրությունից: Պաշտպանության համար հատկապես հարմար են օղակաձև և ճառագայթային հատակագծով բնակավայրերը և ավելի քիչ հարմարավետ, երկարաձգված ձևի բնակավայրերը, որոնք ընդհատվում են այգիներով, զբոսայգիներով և չկառուցպատված հողամասերով: Բնակավայրի համար գիշերային մարտում պաշտպանվող կողմն ունի մի շարք առավելություններ՝ գաղտնի մաններելու հնարավորություն, պաշտպանական կառույցների ստեղծում, կրակային միջոցների և կենդանի ուժի պատսպարում, շենքերի պաշտպանության արագ հարմարեցում, բազմաշերտ կրակի կազմակերպում: Սովորաբար պետք է հաշվի առնել նաև որոշ բացասական կողմեր՝ կրակի վարման սահմանափակ տիրույթ, հրդեհների առաջացման վտանգ, դիտարկման սահմանափակ հնարավորություններ և կրակային միջոցների փոխգործողության կազմակերպում: Բացի այդ, բնակավայրերը միշտ թիրախ են հակառակորդի ավիացիայի և հրետանու համար:

Պաշտպանվող զորքերի մարտական ապահովումն իրականացվում է՝ հաշվի առնելով բնակավայրի կոնկրետ առավելություններն ու թերությունները: Հատուկ միջոցառումները սովորաբար վերաբերում են հրդեհային համակարգի կազմակերպմանը, զորքերի կառավարմանը, մանևրի պատրաստմանը և ինժեներական ապահովմանը: Այդ միջոցառումների մի մասն իրականացվում է ցերեկը, մյուս մասը՝ գիշերը՝ պաշտպանական մարտի ընթացքում :

Գումարտակի (վաշտի) կրակային համակարգը կառուցված է փակ կրակային դիրքերում տեղակայված հրաձգային զենքերի, հրանոթների, ՀՏՀՀ-ների, նռնականետերի և հրետանու կրակի, ինչպես նաև տանկերի, ՀՄՄ-ների, որոնք նախատեսված են ուղիղ նշանառությամբ կրակելու համար:

Մեքենայացված ստորաբաժանումների ծանր զենքերից կրակն առավել արդյունավետ է, երբ այն իրականացվում է լավ տեսանելիության պայմաններում և մեծ խորությամբ: Գիշերը նման պայմաններ սովորաբար չեն լինում: Հետևաբար, կրակի խտությունը մեծացնելու համար վերին հարկերից կրակային միջոցների մի մասը գիշերը իջեցվում է առաջին հարկ կամ նկուղներ՝ պաշտպանվող օբյեկտից անմիջապես առաջ: Երկարատև

պաշտպանության դեպքում կրակային դիրքերը պարբերաբար փոփոխվում են, ընդ որում նախկին դիրքերում հակառակորդին մոլորեցնելու նպատակով տեղադրվում են մանրակերտեր:

Ստորաբաժանումների հրամանատարական դիտակետերն առավելագույնս մոտեցվում են պաշտպանության առաջնագծին և կահավորվում են պաշտպանության շրջանի (հենակետի) լավագույն դիտարկումն ապահովող վայրերում: Քաղաքի տարբեր շրջաններում ստորաբաժանումների գործողությունների ոլորտներում արդյունավետ կառավարում իրականացնելու համար, որոնց դիտարկումն անհնար է ստորաբաժանման հրամանատարի մեկ ՀԴկ-ից, կարող են սարքավորվել օժանդակ ՀԴկ-ներ:

Մարտի ընթացքում քաղաքում առավել լայնորեն կիրառվում է լարային ու սուրհանդակային կապը, ովքեր օգտագործում են առկա ստորգետնյա հաղորդակցությունները:

Գիշերը ՀԴկ-ները տեղափոխվում են առաջին հարկեր, որտեղից կարելի է դիտարկել փողոցները՝ երկայնքով: Չդիտարկվող տարածքները դիտելու համար ուղարկվում են դետքեր, կազմակերպվում են գաղտնալսման կետեր և թաքստոցներ: Բացի այդ, ենթադրվում է այդ տարածքների լուսավորում:

Եթե հակառակորդը գտնվում է պաշտպանվող օբյեկտի անմիջական հարևանությամբ, օրինակ, երբ այն պաշտպանող ստորաբաժանումներից առանձնացված է փողոցի լայնությամբ (տների միջև հեռավորությունը), փողոցի լուսավորությունը կամ տների միջև եղած միջակայքը պետք է լինի շարունակական:

Գիշերը բնակավայրում մարտ վարելու ընթացքում հատուկ նշանակություն են ստանում առանձին շենքերը, հարկերը կամ նույնիսկ սենյակները գրավելու նպատակով իրականացվող հակագրոհները: Նման հակագրոհները կատարվում են անսպասելիորեն սովորաբար առանց կրակային պատրաստության: Գրոհող ստորաբաժանումները գործում են արագ և վճռական: Գրավելով օբյեկտը՝ նրանք անմիջապես ստեղծում են կրակի համակարգ և ամրացնում գրավված շենքի պատերն ու միջհարկային ծածկերը: Ուսումնասիրելով հակառակորդի ստորաբաժանումների վարքային ռեժիմը՝ գիշերը կարող եք դարանակալել նրաց՝ գտնվելու վայրում:

Անտառում

Գիշերը անտառում պաշտպանական մարտ վարելու ընթացքում հրամանատարը պետք է հաշվի առնի բարդ պայմանները (փակ տեղանքը, ստորաբաժանումների երթևեկության համար մատչելի ճանապարհների սահմանափակ քանակը, թունավոր նյութերի երկարատև լճացման հնարավորությունը, անտառային հրդեհների առաջացումը և այլ պայմաններ) և օգտագործի անտառային տարածքի առավելությունները: Անտառում պաշտպանական մարտը կարող է կազմակերպվել լայն ճակատով: Պաշտպանության հիմքը շրջանաձև պաշտպանության համար պատրաստված վաշտերի (առանձին դասակների) հենակետերի համակարգն է: Հիմնական ջանքերը կենտրոնացվում են տանկավտանգ ուղղություններում, ճանապարհների, սողանքների, լճերի և ճահիճների միջև ընկած հատվածներում, անտառային բացատների և անտառեզրերի պաշտպանությանը:

Պաշտպանության առաջնագիծը, կախված իրավիճակից և տեղանքից, ընտրվում է անտառեզրից առաջ կամ տեղակայվում է խորքում: Մարտական պահպանությունը սահմանվում է անտառեզրին, իսկ գիշերը դիտարկումն ու կրակի պայմանները բարելավելու համար պաշտպանության առաջնագծում անտառը մաքրվում է՝ առանց ապաքողարկելու յուրային դիրքերը, որպեսզի կանխեն հակառակորդի անսպասելի հարձակումը, փոքր ստորաբաժանումների (մարտավարական խմբերի) ներթափանցումը

դեպի պաշտպանության խորք, թևեր և թիկունք: Գիշերը անտառում կռիվն իրականացվում է մոտ հեռավորությունների վրա:

Գիշերը անտառը թույլ է տալիս ճանապարհներին և հարձակման ուղղություններում փլատակներ ստեղծել ականապայթյունային և այլ պատնեշների հետ համատեղ, ինչը զգալիորեն նվազեցնում է հակառակորդի հարձակման տեմպը, սահմանափակում է մանևրը ստորաբաժանումներով և պահանջում է դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումների մի ամբողջ շարք: Լուսավորության, ճանապարհների, անտառային արահետների համար առանձնացվում է անձնակազմ՝ անհրաժեշտ միջոցներով:

Գիշերը անտառում կրակային համակարգը կազմակերպվում է այնպես, որ բոլոր ճանապարհները, անցումները, ճահճացած տարածքների, սիզամարգերի և անտառահատված տարածքների միջով անցումները, որտեղ հնարավոր է թշնամու մոտեցումն ու հարձակումը, գտնվեն ստորաբաժանումների թևային և խաչաձև կրակի տակ: Անտառի ելուստներն օգտագործվում են թևային և խաչաձև կրակ ստեղծելու համար: Հակառակորդի հնարավոր հարձակման ուղղություններում տեղակայվում են հիմնական կրակային միջոցները և նախապատրաստվում է հրետանու կրակը: Առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում լավ կազմակերպված ականանետային կրակը, որոնց մի մասն առանձնացվում է տեղանքը լուսավորելու համար:

Գիշերը հակագրոհներն իրականացվում են փոքր ստորաբաժանումների ուժերով նախապես ուսումնասիրված և պատրաստված ուղղություններում, հիմնականում ճանապարհների երկայնքով:

Ձմեռային պայմաններում

Ձմռանը պաշտպանությունն իրականացվում է առավել լայն ճակատում, հակառակորդի հարձակման համար մատչելի ուղղություններում սարքավորվում են վաշտերի և դասակների հենակետերի համակարգ, որոնք պատրաստվում են շրջանաձև պաշտպանության: Հիմնական ջանքերը կենտրոնացվում են ճանապարհների և հարակից բարձունքների, բնակավայրերի, լճային դեֆիլեների, ջրային խոչընդոտների անցումների և այլ կարևոր օբյեկտների պահպանմանը: Պաշտպանական դիրքերը պետք է ընտրվեն բարձրադիր վայրերում:

Ձմռան պարզ գիշերներին զորքերի գործողությունները քողարկելու համար ձեռնտու է օգտագործել ծխաածածկույթ, ձմռան գիշերներին դրանք դժվար է տարբերակել մառախուղից:

Ձյան հաճախակի տեղումները նվազեցնում են տարբեր ցանկապատերի արդյունավետությունը: Ձյան ծածկույթի հաստության մեծացմամբ ականապատ դաշտերը կորցնում են իրենց նշանակությունը, իսկ մետաղալարային արգելափակոցները, դադարում են խոչնդոտ հանդիսանալ: Ուստի հաճախ ստիպված ես լինում նոր ինժեներական պատնեշներ տեղադրել, ընդ որում՝ հիմնականում գիշերը:

Հատուկ ուշադրություն է պետք դարձնել բուժօգնության ցուցաբերմանը: Ձմռանը՝ գիշերային մարտի ընթացքում պահանջվում է վիրավորներին շտապ օգնության ցուցաբերում, հիմնականում նրանց փակ տարածքներ կամ ապաստան հասցնելու համար, այսինքն՝ վիրավորներին ցուրտ պայմաններում գտնվելու ժամանակի կրճատում: Ջերմությունը պետք է ապահովել նաև թիկունք վիրավորների տարհանման ժամանակ:

Մարտերի վարման ժամանակ պահպանվում են ձմեռային մարտերի ընդհանուր սկզբունքները:

Այսպիսով, ձմռանը գիշերային պաշտպանական մարտեր վարելն ավելի դժվար է: Վատթարանում են մարտական տեխնիկայի դիտարկման, մանևրելու, կողմնորոշվելու, թիրախավորելու, կրակի ճշգրտման, ինչպես նաև ստորաբաժանումների կառավարման և

նրանց հետ փոխգործողության պայմանները: Միևնույն ժամանակ, բարենպաստ պայմաններ են ստեղծվում քողարկման, թևերից և թիկունքից հարվածներ հասցնելու համար: Հետևաբար, հրամանատարից պահանջվում է այս բոլոր հատկությունների մանրակրկիտ իմացություն, բարձր կազմակերպվածություն, արդյունավետություն և հիմնավորվածություն որոշում կայացնելու հարցում:

3.4. Անցում գիշերային գործողություններից ցերեկային պաշտպանության

Ժամանակին և կազմակերպված անցումը գիշերային գործողություններից ցերեկային գործողություններին շատ կարևոր պայման է պաշտպանական մարտը հաջողությամբ վարելու համար: Այն կարող է իրականացվել դրա վարման ընթացքում, ինչպես նաև լուսաբացին պատրաստվող հակառակորդի հարվածը հետ մղելու նախապատրաստման ընթացքում:

Լուսաբացին գործողություններ իրականացնելիս կարևոր է հիշել, որ հակառակորդը կարող է հարձակում սկսել, քանի որ պաշտպանվողների դիրքերում անձնակազմի հոգնածությունը զգալիորեն նկատվում է լուսաբացին: Ավելին, լուսաբացին հակառակորդի գործողությունների վրա այլևս չեն ազդում գիշերային անբարենպաստ պայմանները, և գիշերը հարձակում սկսելուց հետո նրանք սովորաբար կարող են ավելի ագրեսիվ գործել: Մթության պարագայում նրանք կձգտեն ներգրավել իրենց երկրորդ շարակարգերը (ռեզերվները)՝ լուսաբացին ավելի հզոր հարված հասցնելու և հաջողության հասնելու համար: Անհրաժեշտության դեպքում ստորաբաժանումների հրամանատարները պետք է պարզաբանեն ենթականերին իրենց առաքելության նպատակը և կրակի համակարգը:

Ցերեկային գործողությունների անցնելու միջոցառումները հրամանատարի կողմից պլանավորվում է ստորաբաժանման ղեկավարման ընթացքում հակառակորդի հարձակումը հետ մղելիս և իրականացվում է լուսաբացին: Այն դեպքում, երբ հակառակորդը գիշերը չի հարձակվել կամ նրա գործողությունները հաջողությամբ հետ են մղվել, ամբողջ պաշտպանությունը նույնպես պետք է նախապատրաստվի (վերակառուցվի) ցերեկային պայմաններում հարձակումները հետ մղելու համար:

Այդ նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները՝

• սահմանվում են հիմնական կրակային դիրքեր կրակային միջոցների տեղափոխման կարգը և ժամանակը, իսկ պահեստային (երկրորդ էշելոն) ստորաբաժանումները՝ հիմնական պաշտպանական գոտի;

• հստակեցվում է կրակի համակարգը;

• մարտական պահպանության ուժերը դուրս են բերվում այն դիրքեր, որտեղ դրանք ծառայելու են օրվա ընթացքում;

• պարզաբանվում են հետախուզության և դիտարկման խնդիրները, եղանակները և գործողությունները;

• պարզաբանվում է փոխգործողության կարգը;

• զինամթերքը համալրվում է լուսաբացից առաջ;

• վիրավորները տարհանվում են թիկունք, հատկապես այն տարածքներից, որտեղ դա անհնար է իրականացնել օրվա ընթացքում;

• անձնակազմը կերակրվում է լուսաբացից առաջ;

• ստուգվում է պաշտպանությունում գտնվող բոլոր միջոցների և օբյեկտների քողարկվածության աստիճանը:

Աղբյուրը: https://vk.com/wall-50957736_602633?ysclid=mghwkk02b1206813422